Իրադրությունն Արցախում օր-օրի գնալով վատթարանում է: Ադըրբեջանական ռազմական կազմավորումները լայնածավալ մարտական գործողություններ են ծավալել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում: Շահումյանի անկումից հետո ընկավ նաև Մարտակերտը: Հայ ազատամարտիկները արյան գնով պաշտպանում են հայրենյաց հողը, հակահարված տալիս արյունարբու թշնամուն: Հազարավոր մարդիկ այնօր թողած տուն ու տեղ, դարձել են գաղթականներ, գիշերում են որտեղ պատահի, անտառներում, փողոցներում, անգամ մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Շահումյանցի փախստականները: